«Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ»

Անարժանս համեստաբար և խոնարհաբար հայցում է Ձերդ Սրբության բարձր ներողամտությունը՝ այս անգամ Ձեզ դիմելու ոչ թե **Դուք**-ով, այլ **Դու**-ով՝ դրանով իսկ հաստատելով այն պարզ ճշմարտությունը, որ խոնարհամիտ որդու և մեծահոգի հոր միջև կապը այնքան անմիջական է և անսեթևեթ, որ որդին երբեք իրեն թույլ չի տա կեղծավորաբար հորը դիմելու **Դուք**-ով:

Դու Քո մանկությունն անցկացրիր բարեպաշտ մի ընտանիքում, որտեղ Քո հոգին զտվեց, պարզվեց և պատրաստվեց ապագա Քո մարդասիրական գործունեությանը:

Պատանեկության և երիտասարդության շրջանում Դու ամբարեցիր լույս և գիտություն՝ միաժամանակ նաև այդ ամբարած լույսն ու գիտությունը հաղորդեցիր մեր ժողովրդի մատաղ սերնդին: Դու դրանով դարձար նրա **ուսուցիչը:**

Հասուն շրջանում Քեզ անմնացորդ նվիրեցիր Քեզ իսկ ծնած և ձևավորած ազգին և նրա դավանած Քրիստոսի Եկեղեցուն: Այդ կոչման մեջ Դու մնացիր հավատարիմ և նվիրյալ և դարձար նրա **հոգու կերտիչը:**

Վեհարանում մի առիթով Դու շեշտեցիր հետևյալ միտքը. «Եթե իմանայի, որ ես, հոգևորական դառնալով, չեմ ծառայելու իմ ժողովրդին, հոգևորական չէի դառնա»: Այդպես էլ եղավ. Դու ընտրեցիր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն ծառայելու նվիրական գործը: Իսկ երբ համայն հայ ժողովուրդը ընտրեց Քեզ այդ նույն Եկեղեցու Ամենայն Հայոց Կաթողիկոս, Քո ազգային գործունեության շրջանակն անհամեմատ ավելի ընդարձակվեց, և Դու դարձար Քեզ ծնած ժողովրդի **ազգային մեծ գործիչը:**

Այսպիսով, ուրեմն, Վեհափառ Հայր, Քո անաղարտ և սրբակյաց կյանքը ապացույցը եղավ այն բանի, որ Դու Քո պատանության և երիտասարդության շրջանում եղար ուսուցիչը Քո ազգի, ավելի հասուն շրջանում՝ հոգու կերտիչը, ապա նաև՝ ազգի առաջնորդը և անփոխարինելի հոգևոր հայրը:

Դու արժանի ես դասվելու մեր ազգի անմահների շարքը:

Դու չցանկացար Քո 86 տարին բոլորել մեզ հետ: Երևի, ավելի ճիշտ կլիներ ասել, Ամենակարող Տերը ավելի վա՛ղ ցանկացավ Քեզ տեսնել իր կողքին: Տիրոջ կամքն է... Համենայնդեպս Քո այսրաշխարհային մարմինը ի զորու չեղավ կրելու վերջին հինգ տարիների ազգի տառապանքներից

ստացած բեռը և ... սակայն որն արիաբար և անմռունչ կրեց և տոկաց Քո սրբակյաց հոգին, թեև ազգային այդ ողջ տառապանքի զգացման աճապարությունն ուղղակիորեն անցնում էր Դու այդ նույն այնքան զգայուն հոգով:

Դու Քո բոլորանվեր հոգևոր և լուսավորական անմնացորդ գործունեության համար մեր նորանկախ պետության իշխանությունների կողմից արժանացար ազգային հերոսի կոչման:

Արժան և իրավ:

Բայց, ցավոք սրտի, եղան մարդիկ, որոնք Քո ազգանվեր գործունեությունը որոշ շրջանում թերահավատությամբ ընդունեցին: Վնաս չունի, այդպես էլ է լինում: Իսկ Քո կյանքի վերջին շրջանը եկավ ապացուցելու այդ նույն թերահավատներին, որ իզուր չես արժանացել ազգային հերոսի կոչման:

Մեր ազգի վերջին այս հինգ երկար ու ձիգ տառապալից տարիներին ազգի և Եկեղեցու հավերժ գոյության համար թափած Քո ջանքերը, Քո բարձրացրած արդարացի ձայնը՝ ի բարօրություն և փրկություն մեր բազմադարյան տառապյալ ազգի, դրա վառ ապացույցն են:

Մեր նորանկախ պետության ղեկավարը Քո թաղման արարողության ընթացքում, Քո շիրիմի առջև, ի ցավ սրտի, շեշտեց այն մասին, որ Դու հեռացար այս կյանքից՝ Քո իղձերից մեկը իրականացած չտեսած... Բայց ես հավատացած եմ, որ մեր Եկեղեցու հաջորդ գահակալը իրականացած կտեսնի այն: Մեր ժողովուրդը այդ հարցին կմոտենա խելամտորեն:

Համայն ազգը հայոց, իր մեծավորներով և փոքրավորներով, մասնակից էր և ականատես Քո վերջին հրաժեշտին: Մասնակից էին նաև մեր հարևան և հեռավոր բարեկամ ու ազգակից ժողովուրդների հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչները: Բոլորը հավաքվել էին Քո ապագա հավերժական դամբարանի առջև և ապում էին Քեզ հանձնելու, ավելի ճիշտ՝ Քեզ բնակեցնելու Քո ապագա բնակարանում, մի բնակարան, որտեղից ապագայում պետք է լույս ճառագի համայն հայ ժողովրդի վրա:

Ամեն ինչ ըստ պատշաճի էր և տեղին: Խոսք չկա: Բայց, անկեղծորեն ասած, սրտի խոր ցավ զգացի, երբ Դու օրվա այդ տասպին «շրջում» էիր Մայր Աթոռի շրջափակում՝ առանց ամպհովանու, մի բան, որ անսովոր էր Քեզ համար: Արևի թվացյալ պայծառ լույսը Աստուծո հրեշտակների լուսապայծառ ներկայությունն էր, որ անվերջանալի ճառագում էր Քեզ վրա: Չէ՞ որ քիչ հետո Դու հավերժորեն լինելու էիր նրանց կողքին:

Քո՝ ինը տասնամյակների բեռի տակ կքած ծերունազարդ մարմինը զգում էի, որ շտապում է իր հավերժական բնակարան, որովհետև անանահմանորեն հոգնած էր...

Արարն ավարտվեց և փակվեց Քո այրսկյանքի վարագույրը: Բայց ոչ, անմահները չեն մեռնում, նրանք հավերժում են...

Ինչպես ամենակարող մեր Տեր Հիսուս Քրիստոսը իր այրաշխարհային մահով եղավ փրկիչը համայն մարդկության, այնպես էլ Դու Քո այրաշխարհային մահով եղար և այսուհետև ևս պետք է լինես փրկիչ համայն հայության:

Դու արժանի ես ասելու.

«Սո քեզ, Տէր, համբարձի զանձն իմ...» (Սաղմոս Դավթի ԻԴ):

ՎԱԼՈՒԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ